

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև կրթության, մշակույթի և գիտության բնագավառներում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հունաստանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր, առաջնորդվելով երկու երկրների միջև արդեն գոյություն ունեցող բարեկամական հարաբերությունների հետագա զարգացման ու ամրապնդման ցանկությամբ,

ձգտելով զարգացնել իրենց համագործակցությունը կրթության, գիտության և տեխնոլոգիայի, մշակույթի, զանգվածային լրատվության միջոցների, մարմնամարզության և երիտասարդության խնդիրների բնագավառներում,

գործելով Եվրոպայում անվտանգության և համագործակցության կոնֆերանսի Հելսինկիի Եզրափակիչ ակտի, Մադրիդի և Վիեննայի հանդիպումների ամփոփիչ տեքստերի, Նոր Եվրոպայի համար Փարիզի Կանոնադրության դրույթների, ինչպես նաև 1991թ. Կրակովում ստորագրված ԵԱՀԽ-ի մշակութային ժառանգության գիտաժողովի Եզրափակիչ տեքստի դրույթների համաձայն, որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը և համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը կձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ, որպեսզի աջակցեն կրթության և գիտության տարբեր ոլորտներում համագործակցության զարգացմանը:

Այս նպատակով նրանք՝

կամրապնդեն համագործակցությունը երկու երկրների բարձրագույն կրթական հաստատությունների և գիտությունների ակադեմիաների միջև,

կնպաստեն մյուս երկրի լեզվի և մշակույթի ուսուցմանը,

կփոխանակեն բարձրագույն կրթական հաստատությունների գիտաշխատողներ,

կօժանդակեն գիտելիքների և փորձի փոխանակմանը բոլոր կրթական մակարդակներով,

փոխադարձ համաձայնությամբ կտրամադրեն կրթաթոշակներ մյուս երկրի բարձրագույն գիտական հաստատություններում ուսումնառությունների համար,

կոյուրացնեն գիտելիքների և փորձի փոխանակումը կրթության բոլոր աստիճաններում, ինչպես նաև մյուս երկրի լեզվի, գրականության և պատմության ուսումնասիրության և իմացության տարածման համար բարենպաստ պայմանների ստեղծումը, կթանակցեն, յուրաքանչյուր երկրի օրենսդրությանը համապատասխան, վկայագրերի, վկայականների, դիպլոմների, աստիճանների և ակադեմիական կոչումների փոխադարձաբար ճանաչման, ինչպես նաև համարժեքության վերաբերյալ համաձայնագրերի կնքման նպատակով:

Կրթական խնդիրներին առնչվող յուրաքանչյուր այլ գործունեություն կհանդիսանա սույն Համաձայնագրի 14-րդ հոդվածի դրույթներին համապատասխան համաձայնեցման ենթակա ծրագրերի առարկա:

Հոդված 2

Պայմանավորվող կողմերը պետք է խրախուսեն և դյուրացնեն, փոխշահավետության հիման վրա, երկու կողմերի փոխանակումներն ու համագործակցությունը տեսական և կիրառական գիտությունների բնագավառներում և ապահովեն համապատասխան հնարավորություններ երկու երկրների գիտական հաստատությունների և կազմակերպությունների, հետազոտական ինստիտուտների, համալսարանների, ինչպես նաև բարձրագույն կրթության այլ հաստատությունների, գիտնականների, հետազոտողների և մասնագետների միջև շփումների համար, ինչպես նաև պետք է խրախուսեն մասնագիտացված ոլորտներում և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաների շուրջ համատեղ գործունեությունը:

Գիտական համագործակցության զարգացման և ընդլայնման նպատակով Պայմանավորվող կողմերը պետք է դյուրացնեն.

1/ հետազոտողների, գիտնականների և այլ մասնագետների այցելությունները, ուսումնական ուղևորությունները և խորհրդակցությունները,

2/ հետազոտական ծրագրերի և նախագծերի համատեղ մշակումն ու իրագործումը և դրանց արդյունքների փոխանակումը,

3/ համատեղ դասընթացների, խորհրդաժողովների և գիտաժողովների կազմակերպումը,

4/ գիտական բնույթի տեսալսողական նյութերի փոխանակումը,

5/ գիտական ցուցահանդեսների և ցուցադրումների կազմակերպումը,

6/ գիտական գրականության, փաստաթղթերի և տեղեկության փոխանակումը:

Հունական կողմից այս նպատակի իրագործման գործակալությունն է արդյունաբերության նախարարության հետազոտության և տեխնոլոգիայի գլխավոր քարտուղարությունը, իսկ հայկական կողմից՝ բարձրագույն կրթության և գիտության նախարարությունը:

Գիտական փոխանակումների և համատեղ հետազոտական նախագծերի իրագործման և կարգավորման հատուկ արձանագրություն կստորագրվի ամեն երկու տարին մեկ՝ հաջորդաբար Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի մայրաքաղաքում: Այդ արձանագրության մեջ հաստատման համար ձևակերպված նախագծերը նախքան իրականացումը համատեղ կներկայացվեն և կգնահատվեն երկու Կողմերի կողմից:

Վերը նշված համագործակցության ֆինանսավորումը կիրականացվի երկու Պայմանավորվող կողմերի կողմից համատեղ՝ հավասարության հիման վրա:

Հոդված 3

Կողմերը կխրախուսեն համագործակցությունը և տեղեկության փոխանակումները երկու երկրների թանգարանների, գրադարանների և արխիվների միջև:

Հոդված 4

Պայմանավորվող կողմերը կզարգացնեն համագործակցությունը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մշակութային տարբեր ոլորտներում և նրանք առանձնահատուկ կխրախուսեն.

- մյուս երկրի արվեստի և գրականության գործերի ներկայացում հետապնդող նախաձեռնությունները, ներառյալ գրական երկերի թարգմանությունները և գրքերի, ինչպես նաև մշակութային այլ հրատարակությունների փոխանակումները,

- գեղանկարչական ցուցահանդեսների և այլ մշակութային միջոցառումների փոխանակումները, ինչպես նաև ֆիլմերի ներկայացումները յուրաքանչյուր երկրի իրավասու մարմինների միջոցով,

- մյուս Կողմի կազմակերպած մշակութային հարցերին նվիրված միջազգային խորհրդաժողովներին, մրցույթներին և հանդիպումներին իրենց ներկայացուցիչների մասնակցությունը,

- երկու երկրների արվեստի ներկայացուցիչների միությունների միջև շփումների զարգացումը և գեղարվեստի ուսուցման ոլորտում փորձի և մասնագետների փոխանակումները, ինչպես նաև անհատ գրողների, դասախոսների և նկարիչների փոխանակումները,
- փորձի և մասնագետների այցելությունների փոխանակումը թանգարարների, ճարտարապետական ու մշակութային ժառանգության պահպանման բնագավառներում,
- Պայմանավորվող կողմերը տեղեկություն կփոխանակեն պատմական հուշարձանների հսկողությանը, պաշտպանությանը և պահպանմանն առնչվող աշխատանքների մասին,
- Կողմերը կկազմակերպեն երկկողմ սեմինարներ և գիտաժողովներ համապատասխան հասարակական հաստատությունների, հետազոտական հաստատությունների, արվեստի և մասնագիտական կազմակերպությունների փորձագետների մասնակցությամբ՝ մշակութային ժառանգության պահպանմանն առնչվող հիմնահարցերի ուսումնասիրության շուրջ,
- արխիվներում, հանրային և համալսարանական գրադարաններում հետազոտությունների դյուրացմանը՝ երկու երկրներում գործող կանոնակարգերի համաձայն,
- թատերական, գեղարվեստական և ազգային խմբերի կամ անհատ կատարողների փոխանակումները:

Հոդված 5

Պայմանավորվող կողմերը կօժանդակեն իրենց միջև ակտիվ համագործակցությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի և մշակույթին, կրթությանը և գիտությանը առնչվող միջազգային այլ կազմակերպությունների շրջանակներում:

Հոդված 6

Պայմանավորվող կողմերը պետք է դյուրացնեն հնագիտության բնագավառում իրավասու մարմինների միջև համագործակցությունը և տեղեկության փոխանակումը:

Հոդված 7

Կողմերը, ընդունելով, որ մյուս երկրի լեզվի իմացության ընդլայնումը համագործակցության նշանակալից գործոն է, կխրախուսեն

հունարենի ուսումնասիրումը և տարածումը Հայաստանում և հայերենինը՝ Հունաստանում:

Նրանք կհամագործակցեն իրենց տարածքներում մշտապես բնակող, համապատասխանաբար, հունական և հայկական ծագումով քաղաքացիների մայրենի լեզվի, մշակույթի և ազգային ավանդույթների պահպանմանը նպատակաուղղված բարենպաստ պայմանների ստեղծման շուրջ:

Հոդված 8

Կողմերը համաձայնում են համապատասխան ժամանակ և փոխադարձության հիման վրա իրենց համապատասխան մայրաքաղաքներում ձեռնամուխ լինել մշակութային կենտրոնների ստեղծմանը:

Կլնքվի հատուկ համաձայնագիր, որը կսահմանի կենտրոնների իրավական կարգավիճակը, կազմակերպումը և գործունեության պայմանները:

Հոդված 9

Պայմանավորվող կողմերը ֆիլմերի փոխանակման միջոցով կխրախուսեն կինոյի բնագավառում կապերի զարգացումը՝ առևտրային հիմքի վրա կամ կապված մյուս Կողմի կազմակերպած միջազգային կինոփառատոներին մասնակցության հետ:

Հոդված 10

Կողմերը կխրախուսեն մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների բնագավառում համագործակցությունը՝ հատկապես կնքելով ուղղակի համաձայնագրեր համապատասխան հաստատությունների և մասնագիտական կազմակերպությունների միջև:

Երկու Կողմերը կխրախուսեն E.T. և E.R.A. և Հայաստանի համապատասխան պետական ռադիոկազմակերպությունների և հեռուստատեսային կազմակերպությունների միջև ուղղակի համագործակցությունը, որի ձևերը և պայմանները կվերլուծվեն նրանց միջև կնքված համագործակցության համաձայնագրերում: Առանձնապես, երկու Կողմերը կխրախուսեն ռադիոժրագրերի և հեռուստատեսային

ծրագրերի, ինչպես նաև հեռուստատեսային համատեղ արտադրությունների փոխանակումները:

Նաև, E.T. և E.R.A. և Հայաստանի համապատասխան ռադիոկազմակերպությունները և հեռուստատեսային կազմակերպությունները հնարավոր բոլոր եղանակներով կաջակցեն երկու երկրներ այցելող լրագրողների աշխատանքին:

Հոդված 11

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն համագործակցության զարգացումը մարմնամարզության և ֆիզիկական դաստիարակության բնագավառում, և նրանք կծգտեն մարմնամարզության բնագավառում ընդլայնել ուղղակի շփումները ու համագործակցությունը երկու երկրների պետական մարմինների միջև: Այս համագործակցության բովանդակությունը և մանրամասները կորոշվեն վերը նշված մարմինների կողմից:

Հոդված 12

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն համագործակցությունը երկու երկրների երիտասարդական հաստատությունների ու կազմակերպությունների միջև սոցիալական և մշակութային ոլորտներում՝ ի շահ երկու երկրների երիտասարդության:

Պայմանավորվող կողմերը տեղեկություն և փորձ կփոխանակեն երկու երկրներում երիտասարդությանն առնչվող բոլոր ոլորտներում զարգացումների վերաբերյալ՝ նպատակաուղղված երիտասարդների միջև հարաբերությունների սերտացմանն ու ամրապնդմանը, բարեկամական մթնոլորտի ստեղծմանը և խաղաղության աջակցմանը:

Հոդված 13

Պայմանավորվող կողմերը կհամագործակցեն զբոսաշրջիկների փոխանակումների զարգացման շուրջ՝ երկու երկրների քաղաքակրթությունները ճանաչելի դարձնելու նպատակով:

Հոդված 14

Այս Համաձայնագրի իրագործման նպատակով Պայմանավորվող կողմերը պետք է հիմնեն հույն-հայկական համատեղ կոմիտե, որը կազմված կլինի երկու կողմերի ներկայացուցիչներից և հաջորդաբար միասեր կգումարի Աթենքում և Երևանում:

Կոմիտեն պետք է քննարկի սույն Համաձայնագրի կիրառմանն առնչվող հարցեր: Այն պետք է մշակի համագործակցության ծրագրերի մանրամասները, ինչպես նաև դրանց ֆինանսական պայմանները:

Հոդված 15

Համաձայնագիրը ուժի մեջ կմտնի դրա համար բոլոր անհրաժեշտ իրավական ընթացակարգերի ավարտման մասին Պայմանավորվող կողմերի՝ միմյանց ծանուցման օրվանից:

Հոդված 16

Սույն Համաձայնագիրն ուժի կմնա հինգ տարվա ընթացքում: Այն այնուհետև ինքնաբերաբար կնորացվի հաջորդ հինգ տարվա համար, եթե Կողմերից որևէ մեկը գրավոր, դիվանագիտական ուղիներով այն չեղյալ չհայտարարի այդ ժամկետներից որևէ մեկի լրանալուց վեց ամիս առաջ:

Կատարված է Աթենք քաղաքում 1994 թ. դեկտեմբերի 16-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, հունարեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանության ժամանակ տարաձայնություն առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1997 թվականի հոկտեմբերի 2-ից: